ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ
(1914–1993)

Ծնվել է Սիսիանի շրջանի Լոր գյուղում:

Հ. Սահյանի բանաստեղծությունները տպագրվել են անցյալ դարի 30-ական թվականներից, սակայն նա համընդհանուր ճանաչման է արժանացել ռազմաճակատում գրած «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությամբ, որը հատկանշվում է Հայաստան երկրի հանդեպ սիրո և կարոտի հուզական բռնկումով:

Առաջին գիրքը լույս է տեսել «Որոտանի եզերքին» խորագրով: Սահյանի «Սեզա՛մ, բացվի՛ր» ժողովածուն արժանանում է պետական մրցանակի: Հեղինակը իր «Իրիկնահաց», «Կանաչ, կարմիր աշուն», «Դաղձի ծաղիկ» ժողովածուներում պատկերում է մարդկային կյանքի ու ապրումների մասին:

Համո Սահյանը վախճանվել է 1993 թ.: